

## Հասմիկ Հովհաննեսի Բարեղամյանի

«Ձվարանային պահուստը որպես դեռահաս տարիքի աղջիկների վերարտադրողական ներուժի գնահատման նոր գործիք» թեմայով  
ԺԴ. 00.01 – «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության պաշտոնական ընդդիմախոս Բ.Գ.Թ. Ռ.Ս.Վարդանյանի կարծիքը

Ատենախոսի աշխատանքը նվիրված է վերարտադրողական տարիքում պտղաբերության ցածր պահուստի ռիսկի խմբին պատկանող դեռահասների հայտնաբերմանը, նրանց կյանքի որակի լավացմանը, հոգեբանական աջակցության տրամադրմանը և հետագա վերարտադրողական ֆունկցիայի իրականացման համար անհատական վարման պլանի մշակմանը՝ վերարտադրողական տարիքում մանկածնման ֆունկցիայի խանգարումները, մանկաբարձագինեկոլոգիական մարտահրավերները կանխելու նպատակով:

Վերջին տարիներին ամբողջ աշխարհի հետազոտողների ուշադրությունը սևեռվում է դեռահաս տարիքի աղջիկների վերարտադրողական առողջության պահպանմանը: Հստակ է, որ կնոջ վերարտադրողական ներուժը մեծապես որոշվում է մանկության և սեռահասունացման շրջանում դեռահասի առողջական վիճակով: Հետազոտական աշխատանքն ուղղված է ձվարանային պահուստի ցուցանիշների և դրանց վրա ազդեցություն ունեցող գործոնների գնահատմանն ավելի վաղ՝ դեռահաս տարիքից սկսած՝ սևեռելով ռիսկի խմբի դեռահասների և նրանց ծնողների ուշադրությունը հետագա վերարտադրողական առողջության պահպանման կարևորության վրա: Ի տարբերություն կանանց՝ վերարտադրողական տարիքում ձվարանային ցածր պահուստի առումով ռիսկի խմբին պատկանող դեռահասների հորմոնալ ֆունկցիան քիչ է ուսումնասիրված, նրանք և նրանց ծնողները կամ խնամակալը հիմնականում իրազեկված չեն պտղաբերության պահպանման կարևորության և գործող ռազմավարությունների մասին: